ԳՐԱԼԵՍԱՐՆԵՐ ՀԱՅՈՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ, ՄԱՍԱՅԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԱՀ.-ԴԵՊ. ՐԵՆ. ԿՈՄԻՍԱՐԻՈՍ

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԲԱՆՈՒՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

(Ընդունուած 1920 թ. մայիսին կուսակց. կոնֆերանսում, Ալեքսանդրապոլում)

Գրքատուն
Պետրոսի «Մայրենիքի»
1920 թ.

Ա 12 7 3.ԱԲ

ԾՐՈԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՕՑ.-ԴԵՄ. ԲԱՆՎՈՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Բուրժուական հասարակութեան, տնտեսական զարգացումը բնական անհրաժեշտութեամբ հետևցնում է մանր արդիւնագործութեան խորտակումը, որի հիմքն է կազմում արտադրողի մասնաւոր սեփականութիւնը իր արդիւնագործութեան միջոցների նկատմամբ։ Նա զատում է արտադրողին իր արդիւնագործութեան միջոցներից և դարձնում նրան սեփականազուրկ, պրոլետար, իսկ այդ արդիւնագործութեան միջոցները դառնում են մենաշնորհ անհամեմատ նուազ թուով կապիտալիստների և խոշոր կալուածատէրերի ձեռքին։

Արդիւնագործութեան միջոցների մենաշնորհի հետ զուգընթաց տեղի է ունենում մանր ու անջատ արդիւնաբերութիւնների ընկնումը խոշոր արդիւնաբերութեան կողմից, ըստ որում հասարակ գործիքը փոխարինւում է մեքենայով և հանդէս է գալիս մարդկային աշ-

խառանքի արդիւնաւէտութեան մի վիթխարի ազդում։ Սակայն այս յեղաշրջման բոլոր օգուտները իւրացնում են կապիտալիստները և խոշոր կալուածատէրերը։ Ընդհակառակը, պրոլետարիատի և կուլ գնացող մի քանի խաւերի (մանր բուրժուազիա, գիւղացիութիւն) համար այդ զարգացումը նշանակում է օրաւուր աճեցնում նրանց գոյութեան անապահովութեան, նրանց թշուառութեան, ճնշման սարքութեան ու շահագործման։

Միշտ բազմանում և ծաւալւում է պրոլետարների թիւը, շարունակ աւելանում է շահագործողների ու շահագործուողների, տիրապետողների ու ենթարկուողների հակառակութիւնը, միշտ ու շարունակ գառնանում է ամենազօրեղ ուժ է դառնում կարգային կռիւը բուրժուազիայու պրոլետարիատի մէջ։ Կռիւ, որ բաժանել է ժամանակակից հասարակութեանը երկու թշնամական բանակի և կազմում է համօրինակ նշանը բոլոր ինդուստրիական երկրների։

Սեփականատէրերին ու սեփականազուրկներին բաժանող վիհը աւելի ու աւելի է խոնարհում և լայնանում։ Կապիտալիստական արդիւնագործութեան սիստեմից բղխող գնաժամերը, որոնք աւելի ու աւելի ընդարձակւում և աւելիչ են գառնում դարձնելով ընդհանուր անապահովութիւնը նորմալ կացութիւն՝ և շօշափելի փարձերով ապացուցում որ արդիւնագործութեան միջոցներն մանաւանդ սեփականութիւնն այլևս անհամաձայնելի է նրանց նպատակայարմար զարգացման հետ։

Արդիւնագործութեան միջոցների մանաւանդ սեփականութիւնը, որ մի ժամանակ միջոց էր ծառայում ապահովելու արտադրողի իրական իրաւունքը իր արդիւնքների վրայ՝ այսօր դարձել է մի միջոց եքսպլուատացիայի ենթարկելու գիւղացիներին, արհեստաւորներին և մանր վաճառականներին, ուր դարձնելով ազգանուորներին՝ այն է կապիտալիստներին ու խոշոր կալուածատէրերին բանուորների վասատին։ Միայն արդիւնագործութեան միջոցներին՝ կալուածք ու հող, հանքահորեր ու լեռնահանքեր հում նիւթեր, մեքենաներ, հաղորդակցութեան միջոցներ և այլն— միայն այս բոլորի ներկայումս մանաւանդ կապիտալիստական սեփականութեան վերացումը և այս բոլորի փոխանցումը հասարակական սեփականութեան, միայն, ապրանքային արդիւնաբերութեան յեղաշրջումը սոցիալիստականի, որ նշանակում է արդիւնագործութիւն հասարակութեան համար և հասարակութեան միջոցով, միայն անհատական կեանքի նման յեղաշրջումը կարող է ներդործել, որ խոշոր արդիւնագործութիւնը և հասարակական

աշխատանքի մշտապես ամող բեղմնաւորութիւնը փոխանակ ազգիւր համարելու շահագործող դասակարգերի թշնամութեան ու ընկճման՝ դառնան նրանց ամենաբարձր բարեկեցութեան և բազմակողմանի ներդաշնակ կատարելագործութեան ազբիւրը։

Հասարակական այդ յեղաշրջումը նշանակում է ազատագրութիւն ոչ միայն պրոլետարիատի, այլև համայն մարդկային ցեղի, որ տաւժում է ներկայ դժնդակ պայմանների ներքոյ։ Սակայն ազատագրական այդ մեծ առաքելութիւնը կարող է համարուել միայն բանւոր դասակարգի գործ, որովհետև միւս բոլոր դասակարգերը՝ նակառակ շահերի փոխադարձ ընդհարման, այնուամենայնիւ կանգնած են արդիւնագործութեան միջոցների մասնաւոր սեփականութեան հայեցակէտի վրայ և նրանց ընդհանուր նպատակն է կազմում արդի հասարակութեան էական հիմքերի պահպանումը։

Բանւոր դասակարգի կռիւը կապիտալիստական շահագործութեան դէմ բնականօրէն դառնում է քաղաքական կռիւ։ Բանւոր դասակարգը չի կարող յաջողել իր տնտեսական պայքարի մէջ, զարգացնել իր տնտեսական կազմակերպութիւնները առանց տիրանալու քաղաքական իրաւունքների։ Նա չի կարող մասնաւոր արդիւնագործութեան միջոցները վերածել համայնական սեփականութեան առանց տիրանալու քաղաքական բարձր օրէնքի։

Բանւոր դասակարգի այդ կռիւն ինքնուրոյն և գիտակցական կերպով կազմաւորելը և նրա առաջնորդումը դէպի իր բնականհրաժեշտ նպատակը — սոցիալիստական հասարակակարգի իրականացումը — կազմում է սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան էական դերը։

Այն բոլոր երկրներում, որ տիրում է կապիտալիստական արդիւնագործութեան սիստեմը, մի և նոյնն է բանւոր դասակարգի շահերը։ Հազորդակցութեան սերտացումով և համաշխարհային շուկայի համար եղած արդիւնաբերութեան ընդարձակումով աւելի ու աւելի կախման մէջ է ընկնում մի երկրի պրոլետարիատի դրութիւնը միւսից։ Հետևապէս բանւոր դասակարգի ազատագրութիւնը մի շարժում է, որին հաւասարապէս մասնակցում են բոլոր երկրների բանւորները։

Այս խոր գիտակցութեամբ Հայաստանի Սոց.—Դեմ. Բանւոր. Կուսակցութիւնը միաբան ու համերաշխ է բոլոր երկրների դասակարգային գիտակցութիւն ունեցող բանւորների հետ։

Հայաստանի ժողովուրդը դարձել է կապիտալիստական կարգերին ենթակայ միմասում։ Հայ բանւորը այսօր պիտի իր դիրքը գրաւէ չրջապատի մէջ, կազմակերպուած ու

շաղկապված պետությունն բոլոր ազգերի բանուորների հետ, նա պիտի վարէ իր դասակարգային քաղաքականությունը և կռիւը։

Կազմակերպել ու դասախօսել մեր երկրի պրոլետարիատը (և այլ աշխատաւոր մասսաներ) և զեկավարել նրա հրիւը — է Հայաստանի Սոց.—Դեմ. Բանուոր. Կուսակցութեան գործը

Հայաստանի Սոց.—Դեմ. Բան. Կուս. կուում է ոչ թէ դասակարգայինների արտօնութիւններ ու իրաւունքներ նուաճելու համար, այլ խոչընդոտելու դասակարգային տիրապետութիւնը և իրանց՝ դասակարգերին, խոչընդոտելու յանուն բոլորի հաւասար իրաւունքների ու հաւասար պարտականութիւնների։ Այս հայեցակէտն ընդունելով իրան ելակէտ՝ նա կուում է ոչ միայն վարձու բանուորների շահագործման ու ընչքման դէմ, այլև հակառակէ ոռնոտարակ ամեն մի շահագործման ու բռնութեան, լինի դա ուղղված դասակարգի, կուսակցութեան, սեռի, ազգի թէ կրօնի դէմ։

Հայաստանի Սոց.—Դեմ. Բանուոր Կուսակցութիւնը ներսուկ է կռնգնում Միացեալ Հայաստանի քաղաքական անկախութեան, պայքարում է նրա պետական ինքնուրոյնութիւնը իրրև ամիսվար հանրապետութիւն հետևեալ հիմքերով։

1. Ժողովուրդը պետութեան միահեծան դլուխն է։ Նա ընտրում է ներկայացուցչական ժողով, որին յանձնում է պետութեան դեկը։

2. Ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի բնտրական իրաւունք քսան տարեկանի հասած բոլոր քաղաքացիների ու քաղաքացուհիների համար թէ օրէնսդիր ժողովի և թէ տեղական ինքնավարութեան մարմինների ընտրութիւններին։ Իրաւունք ընտրողներին լինելու ընտրուող։ Երկամեայ պարլամենտ։ Ժողովրդական ներկայացուցիչները ստանում են վարձատրութիւն պետական դանձարանից։ Ընտրութիւնները կատարւում են մի օրինակն հանդստեան օր։

3. Լայն տեղական ինքնավարութիւն։ Ազգային ինքնավարութիւն այն բոլոր տեղերի համար, որոնք աչքի են ընկնում տեղական ինքնայատուկ պայմաններով և բնակչութեան կազմով։

4. Ընձեռնմխելիութիւն անձի և բնակարանի։

5. Ընտանեվարական պատուիրան խղճի, խօսքի, մամուլի, ժողովների, գործադուլների ու միութիւնների։

6. Ազատութիւն տեղափոխման և դրաղմունքի,

7. Դասերի վերացումն և կատարեալ հա-

մանաւանդ իրաւունքներ բոլոր քաղաքացիներին, անկախ նրանց ազգից, կրօնից, ցեղից և ազգութիւնից։

8. Ամեն մի ժողովուրդ իրաւունք ունի կրթութիւն ստանալ իր մայրենի լեզուով, ծախսերն ապահովացրած պետութեան և ինքնավար մարմինների կողմից։ Իւրաքանչիւր քաղաքացի իրաւունք ունի բացատրել իր մայրենի լեզուով ամեն տեղ. պետութեան մէջ բոլոր լեզուները ունին համահաւասար իրաւունքներ բոլոր տեղական, հասարակական և պետական հիմնարկութիւններում.

9. Պետութեան կազմի մէջ մտնող բոլոր ազգերի համար ազգային-կուլտուրական աւտոնոմիայի իրաւունք, ծախսերը ապահովացրած պետական բիւջէից։

10. Զրի և պարտադիր, ընդհանուր և պրոֆեսիոնալ ուսումն երկու սեռի բոլոր երեխաների համար մինչև 16 տարեկան հասակը։ Պետութիւնը կամ ինքնավար մարմինները հոգում են շունչուորների բոլոր պէտքերը։

11. Դատաւորների ընտրութիւնը ժողովրդի կողմից։

12. Իւրաքանչիւր քաղաքացի իրաւունք ունի սովորական կարգով հետամտելու երդեալների դատարանում ամեն մի պաշտօնեայի։

13. Զրի իրական հոգատարութիւն և օգնութիւն։

14. Վնասի հատուցումն անմեղ մեղադրուածին, ձերբակալուածին և դատապարտուածին։

15. Մահուան պատժի վերացումն։

16. Զրի բժշկական խնամք և առողջապահական հոգատարութիւն։ Մեռելի ձրի թաղումն։

17. Մշտական զօրքի վերացումն և նրա փոխարինումը ժողովրդական միլիցիայի. ընդհանուր զինավարժական կրթութիւն։

18. Միջազգային վէճերի ու կոնֆլիկտների լուծումը խաղաղասիրական ատեանի միջոցով։

19. Եկեղեցու անջատումը պետութիւնից և դպրոցի անջատումը եկեղեցուց. կրօնը համարել անհատի մասնաւոր գործ։

20. Վերացումն անուղղակի հարկերի։ Պրոգրեսիւ հարկի հաստատում եկամուտների ու ժառանգութեան վրայ։

21. Հարկերի տարեկան որոշումն։

22. Հողային օրէնք, ըստ որում գրաււում են մասնաւոր կալուածատիրական, եկեղեցական և վանքապատկան հողերը և յանձնւում պետութեան, կազմելով պետական հողային ֆոնդ՝ բաւարարելու հողազուրկ կամ սակաւահող քաղաքացիների պէտքերը։ Դիւղական համայնքների հողերը մնում են այդ համայնքների իրա-

սաստիճան հերքել։ Հողերի բաշխումը աշխատաուրբական նորմայով։ Պետական հողային ֆոնդի ուելցուկի (երբ բաւարարուած են քաղաքացիների աշխատաուրական պահանջները) օգտագործումը կոոպերատիվ սիստեմով ընկերակցութիւնների կամ մասնաւոր ձեռնարկողների միջոցով։ Պետական են բոլոր ջրերը և երկրի խորքերի հարստութիւնները։

Բանուոր գասակարգի կանոնաւոր կենցաղի և գասակարգային կռիվ յաջողութեան համար Հայաստանի Սոց — Դեմ. Բան. Կուսակցութիւնը պահանջում է.

1 Սա առաւելագոյն ութ ժամեայ բանուորական օր արդիւնաբերութեան բոլոր ճիւղերում։

2. Օրէնքով շաբաթական հանգիստ բոլոր վարձու բանուորներին շարունակաբար ոչ—պակաս 42 ժամից։

3. Արտականոն աշխատանքի արգելում։

4. Գիշերային աշխատանքի արգելումն անտեսութեան բոլոր ճիւղերում, բացառութեամբ այն տեղերի, ուր այդ անհրաժեշտ է տեխնիկական տեսակէտից բուն հայցողութեան բանուորական կազմակերպութիւնների։ Գիշերային աշխատանքը շարունակում է 6 ժամից ոչ աւել։

5. Արգելում է ձեռնարկողին օգուտել

երեխաների աշխատանքից մինչև 16 տարեկան հասակը, իսկ անչափահասների (16—18 տ.) աշխատանքի ժամերը տևում են 6 ժամից ոչ աւել։

6. Կանանց աշխատանքը արգելում է այն ճիւղերում, ուր այդ վնասակար է կանաց օրգանիզմին։ Զատուկ կին բանուորին աշխատանքից ծննդաբերութիւնից 6 շաբաթ առաջ և վեց շաբաթ յետոյ, պահպանելով աշխատավարձը սովորական չափով։

7. Կատուցանել բոլոր գործարաններում և գանազան ձեռնարկութիւններում, ուր աշխատում են կանայք, առանձին շինութիւններ կրծքի հիւանդութիւն ունեցողների և փոքրահասակ երեխաների համար։ Մանուկներին սնունդ կանաց ազատել աշխատանքից ոչ պակաս քան իւրաքանչիւր 3 ժամը միանգամ, ոչ պակաս կէս ժամ ժամանակամիջոցով։

8. Պետական ապահովագրութիւն բանուորների՝ հիւանդութեան, հաշմանդամութեան անկարութեան և ծերութեան դէպքում, որոշ ֆոնդի հաշիւին՝ կազմուած ձեռնարկողների վրայ գրած առանձին հարկերից։

9. Արգելումն աշխատավարձի ապրանքներով վճարումը։ Աշխատավարձը տրւում է իւրաքանչիւր շաբաթ աշխատանքի ժամերին։

10. Արգելումն ձեռնարկողներին հանելու

աշխատավարձից զանազան կողմնակի պարտադ վճարներ. ինչ առիթով և նպատակով էլ այդ մասին դիմումն լինի։

11. Նշանակումն գործարանային տեսուչների արդիւնաբերութեան բոլոր ճիւղերում. Տեսչութեան հսկողութեան տարածումն բոլոր ձեռնարկութիւնների վրայ, ուր գործադրւում է վարձու աշխատանքը (տների, հիւրանոցների ծառայողների աշխատանքն ևս մտնում է այդ հսկողութեան տակ)։ Գործարանային տեսչուհիների նշանակումն այն ճիւղերում, ուր գործադրւում է կանացի աշխատանք. Բանւորներից ընտրւած և պետութիւնից ճանաչւած ներկայացուցչական մարմնի հաստատումն՝ հսկելու գործարանային օրէնքների գործադրութեան վրայ։

12. Տեղական ինքնավարութեան պատշաճաւոր մարմինները՝ բանւորների կողմից ընտրւած ներկայացուցիչների մասնակցութեամբ հսկում են այն բնակարանների առողջապահիկ դրութեան վրայ, որ տալիս են բանւորներին գործատէրերը։ Հսկողութեան ենթակայ է նոյնպէս այդ բնակարանների ներքին կանոնաւորութիւնը և վարձու պայմանները, որպէսզի չմոլորւի գործատէրերին միջամտելու բանւորների մասնաւոր ու քաղաքացիական կեանքին ու գործունէութեանը։

13. Գործարանները, տնտեսարակ աշխատանքի տեղերը ենթարկւում են բժշկա-սանիտարական հսկողութեան սնկախ գործատէրերի կողմից գործադրւած միջոցների։

14. Բրէական պատասխանատուութիւն աշխատանքի ապահովութեան համար հաստատւած օրէնքները զանցառող գործատէրերի վերաբերմամբ։

15. Աշխատանքի դատարաններ արդիւնագործութեան բոլոր ճիւղերում, բանւորների և ձեռնարկողների կողմից համահաւասար թւով ընտրւած ներկայացուցիչներից։

16. Պարտաւորացումն տեղական ինքնավարութիւնների հիմնելու տեղական ու եկւոր բանւորների համար աշխատանքի բոբսաներ, որոնց վարչութիւնների մէջ մասնակցութիւն ունին բանւորական կազմակերպութիւնների ներկայացուցիչները։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑ.-ԴԵՄ. ԲԱՆ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

I.

1] Հայաստ. Սոց.—Դեմ. Բան. Դուսակց. հանդիսանում է անկախ մի կազմակերպութիւն, իբրև ներկայացուցիչ հայ պրոլետարիատի։

ԳՐԱԿԱՆ ԱՐԽԻՎ ԲԱՆԳԱՐԱՆ

2) Հայաստ. Սոց.—Դեմ. Բան. կուսակց. անդամ կարող է լինել նա միայն, ով ընդունում է կուսակցութեան ծրագիրը, կանոնադրութիւնը, տաքտիկը և գործում է կուսակցութեան խմբերից կամ մարմիններից մէկի մէջ։

3) Կուսակցութիւնը բաղկացած է պարզ կամ պրոֆեսիոնալ խմբերից քաղաքներում և գիւղերում։

4) Մի քանի այդպիսի խմբեր միանալով ընտրում են մի քաղաքի կոմիտէն կամ մի գիւղի ենթակոմիտէ։

5) Այդ ձևով ընտրուած կոմիտէները հաստատւում են կուսակցութեան կենտ. կոմիտէի կողմից, իսկ ենթակոմիտէները հաստատւում են իրանց շրջանի կոմիտէների կողմից։

6) Կոմիտէները և ենթակոմիտէները վարում են իրենց տեղական գործերն ինքնավար կերպով։ Առանձնայատուկ դեր կատարող խմբերի իրաւունքներն որոշում են նրանց ստեղծող և ղեկավարող մարմինների կողմից։

7) Կոմիտէների և ենթակոմիտէների պաշտօնն է մղել սոցիալիստական ագիտացիա և պրոպագանդա գրաւոր և բերանացի, կազմել խմբեր և միութիւններ՝ վարել տեղի տնտեսական ու քաղաքական կեանքը։

8) Կուսակցութեան իւրաքանչիւր մարմին հարկ եղած զեկոյցում մանրամասն հաշիւ ներկայացնելու իրենից բարձր հիմնարկութեան։

9) Կուսակցութեան իւրաքանչիւր մարմին խնդիրները լուծում է ձայների պարզ մեծամասնութեամբ, բացի այն կարևոր խնդիրներից, որոնց լուծման համար նախապէս ընդունում է ձայների $^2/_3$-ը։ Կոմիտէների կամ ենթակոմիտէների միջից հեռացրած անդամի տեղ ընտրողների մեծամասնութեամբ ընտրում է նորը։

10) Կուսակցութեան ամեն մի անդամ նիւթապէս օժանդակում է կուսակցութեան։

II

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

11) Կուսակցութեան ամենաբարձր հիմնարկութիւնը հանդիսանում է կուսակցութեան համագումարը։ Համագումարը հրաւիրում է կուսակցութեան կենտ. կոմիտէի կողմից տարին մի անգամ։ Կենտրոնական կոմիտէն պատրաստ է արտակարգ համագումար հրաւիրել, եթէ այդ պահանջում են ձայն ունեցող մարմինների կիսից աւելին։

12) Համագումարին մասնակցում են բոլոր իրաւազօր կոմիտէները, ներկայացուցիչներ

տալով համեմատ կազմակերպված ընկերների. կենտրոնական կոմիտէն երկու ձայնով, կենտրոնակ. օրգանը երկու ձայնով։

Ծանօթ. 1 Կուսակցութեան մարմինները կարող են ուղարկել ուրիշ անդամներ էլ խորհրդատու ձայնով։

13) Համագումարը վաւերական է միայն այն դիպուածում, երբ ներկայ են իրաւազօր մարմիններ։ կէսից աւելին։

14) Համագումարի վճիռներն անցնում են ձայների պաշտ մեծամասնութեամբ։

III

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

15) Մի համագումարից մինչև միւս հերթական համագումարը՝ կուսակցութեան դեկավարութիւն, ստանձնում է Կենտր Կոմիտէն, նա դեկավարում և միացնում է կուսակցութեան տնտեսական և քաղաքական հիւրը, պահպանում է յարաբերութիւններ սոցիալիստական և այլ կուսակցութիւնների հետ, հաստատում է կոմիտէները. հսկում է կազմակերպութեան բոլոր մարմինների վրայ, որպէսզի սրբանք յարգեն համագումարի որոշումները և չշեղուեն կուսակցութեան ծրագրի, կանոնադրութեան և տաքտիկի ընդդծած ուղիից։ Նա հայթհայթում է միջոցներ կուսակցութեանն իւթական ապահովութեան համար, պահում է կուսակցութեան կենտր. դրամարկղը։ ստանում է կոմիտէներից նրանց ունեցած դրամի մի մասը, մի անգամ ընդ միշտ հաստատելով որոշ տոկոս այդ մարմինների համաձայնութեամբ։ Նա դեկավարում է կուսակցութեան կենտրոնական օրգանը։

16) Կենտրոնական կոմիտէն ներկայացնում է հաշիւ իր գործունէութեան մասին համագումարին, կազմում է համագումարի օրակարգը և հրաւիրում է համագումար, մի ամիս առաջ ուղարկելով հրաւէրը և օրակարգը բոլոր իրաւազօր մարմիններին.

17) Կենտրոնական կոմիտէն քննում է կուսակցութեան մարմինների մէջ ծագած տարաձայնութիւնները և կայացնում որոշումներ, որոնք պարտաւորեցուցիչ են կողմերի համար։

18) Կենտրոնական կոմիտէն ընտրւում է համագումարի կողմից մի տարով։

19) Կուսակցութեան իւրաքանչիւր անդամ կամ մարմին իրաւունք ունի իր առաջարկները, պահանջները և բողոքը տեղական օրգանների միջոցով հասցնել կուսակցութեան Կենտր. Կոմիտէին։

20) Կուսակց. Կենտր. Կոմիտէն յայտարարում է արձակված մի որևէ կոմիտէ, եթէ տեղի կազմակերպված բանուորների մեծամասնութիւնը պահանջում է այդ։

21) Կենտ.ը կոմիտէի բոլոր որոշումները պարտադիր են կուսակցութեան բոլոր հիմնարկութիւնների համար։

IV

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՄՈՒԼ

22) Կուսակցութիւնն ունի կենտրոնական օրգան։

23) Սրա խմբագրութիւնն բնտրում է Կենտր. Կոմիտէի կողմից։

24) Կենտր. օրգանի խմբագրութիւնը վարում է կուսակցութեան իդէական գործունէութիւնը։

Ամբողջ մամուլը գտնւում է Կենտր. Կոմիտէի հսկողութեան տակ. սա կարող է արձակել կենտր. օրգանի խմբագրութիւնը և հրաւիրել նորը։

25) Կուսակցութեան ամեն մի մարմին իրաւունք ունի հրատարակել իր մասնաւոր կարիքներին համապատասխանող որոշ գրականութիւն։

ՀԵՏ ՀՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Կ. Ս.
19127



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՆ
Հ. Ս. - Դ. Բ. Կ.
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻ